Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Դեկտեմբերի 9-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հանդիսապետությամբ, կատարվեց գոհաբանական աղոթք՝ մասնակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հայրերի: Արարողությանը ներկա էին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու բարերարներ տիարք Նորայր Տեր-Գևորգյանը և Սարո Խուդավերդյանը:

Արարողության ավարտից հետո Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց ազգային բարերարներին հավատավոր ժողովրդի անունից՝ ի մասնավորի նշելով. «Վերընստին ձեր սիրո, գնահատանքի թարգմանը ուզում եմ դառնալ և ձեր սրտի երախտագիտության անկեղծ զգացումները փոխանցել մեր բարերարներին՝ աղոթքով հանդերձ իրենց կյանքի արևշատության և իրենց գործոց հաջողության համար: Թող Աստված առաջնորդի նրանց դեպի Բարին, գեղեցիկը, դեպի ազնիվն ու ճշմարիտը, որպեսզի այս արժեքներով ծաղկի կյանքը իրենց ընտանեկան, զորանա կյանքը մեր հայրենական և պայծառանա Եկեղեցին Հայաստանյայց»:

Արարողությունից հետո եկեղեցական թափորն ուղղվեց դեպի Ս. Աշխեն թագուհու մատուռ՝ կառուցված տեր և տիկին Տեր-Գևորգյանների բարերարությամբ: Մատուռում կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ազգային բարերարների ընտանիքների ենջեցյալների հոգիների հանգստության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՌԱՔԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՆԵԼՈՒՄ ՀԱՅԿԱՐԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՄԱՐՏԱԿ ԱՌՍՓԵՂԵԱԿԻ ՇՍՄՄԻՆՈՒՄՈՎ ՀՍԿԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ